EHEAROME2020

Հռոմ Նախարարական հաղորդում

ՀԱՎԵԼՎԱԾ II

EUROPEAN Higher Education Area

bologna process

ITALIAN BFUG SECRETARIAT 2018-2020

Edited within the Erasmus+ project "IN-GLOBAL Enhancing Knowledge of the EHEA and Global Dialogue" in 2023.

The original version of the Rome Communiqué and its annexes are available on the website of the European Higher Education Area:
https://ehea.info/page-ministerial-conference-rome-2020

Funded by the European Union. Views and opinions expressed are however those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union or the European Education and Culture Executive Agency (EACEA). Neither the European Union nor EACEA can be held responsible for them.

ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածությունն ամրապնդող սկզբունքները եւ ուղեցույցները

Պատրաստված է ԲԳՀԽ-ի սոցիալական ուղղվածության հարցերով 1-ին խորհրդատվական խմբի կողմից

Ներածություն

2018 թվականի Փարիզի հաղորդմամբ ընդունվեց անդամ պետություններին ուղղորդելու անհրաժեշտությունն առ այն, թե ինչպես սահմանել եւ իրականացնել ԵԲԿՏ-ի սոցիալական ուղղվածության բարելավմանն ուղղված քաղաքականությունը: Այս փաստաթղթում ընդգծվում են առանցքային սկզբունքները եւ ուղեցույցները, որոնք մեր կարծիքով հիմնարար են բարձրագույն կրթության ոլորտում սոցիալական ուղղվածության հետագա զարգացման համար: Այս փաստաթղթում որպես ելակետ ընդունվում է 2007 թվականի Լոնդոնի հաղորդման մեջ հերկայացված սոցիալական ուղղվածության սահմանումը, մասնավորապես այն, որ բոլոր մակարդակներում բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվող, դրանցում սովորող եւ դրանք ավարտող ուսանողական քանակակազմը պետք է համապատասխանի լայն հասարակության տարասեռ սոցիալական պատկերին ԵԲԿՏ երկրներում: Սոցիալական ուղղվածության հարցերով խորհրդատվական խումբը նույնպես դուրս է գալիս վերը նշված սահմանման շրջանակներից եւ ընդլայնում է այն՝ շեշտելով, որ սոցիալական ուղղվածությունը ներառում է բարձրագույն կրթության մեջ ներառական միջավայրի ստեղծում, որը խթանում է հավասարությունը, բազմազանությունը եւ արձագանքում է տեղական համայնքների կարիքներին:

Սույն փաստաթղթում պարունակվող սկզբունքները եւ ուղեցույցները լրացնում են 2015 թվականին Երեւանում նախարարների կողմից ընդունված «Մասնակցության ընդլայնում հանուն հավասարության եւ աճի»[1] 2020 թվականի ԵԲԿՏ ռազմավարությունը՝ որպես սոցիալական ուղղվածության հետագա ամրապնդման միջոց՝ միաժամանակ նպաստելով բարձրագույն կրթության որակի բարձրացմանը: Սոցիալական ուղղվածությունը պետք է բարձրագույն կրթությանն առնչվող բոլոր օրենքներում, քաղաքականություններում եւ գործելակերպերում մատչելիության, հավասարության, բազմազանության եւ ներառականության սկզբունքներն այնպես միավորի, որ բարձրագույն կրթության հասանելիությունը, մասնակցությունը, առաջընթացը եւ կրթությունն ավարտելը հիմնականում կախված լինեն ուսանողների ունակություններից, այլ ոչ թե նրանց անձնական հատկանիշներից կամ անմիջական ազդեցությունից դուրս գտնվող հանգամանքներից: Հաշվի առնելով այս շրջանակը՝ պետական մարմինները պետք է աջակցեն այս սկզբունքների եւ ուղեցույցների իրականացմանը՝ առաջարկելով իրավական, ֆինանսական, վարչական եւ տեղեկատվական շրջանակներ, որը կարող է տեղական մակարդակում նախաձեռնել իրականացման գործընթացները: Այս շրջանակը կխթանի ներառական ռազմավարությունները, որոնք թե՛ տրամադրում են հատուկ աջակցություն խոցելի, անապահով եւ թերներկայացված ուսանողներին[2], թե՛ ընդգծում են առավել լայն միջոցառումներ եւ քաղաքականություններ, որոնցից ուսանողությունը եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատող անձնակազմը կարող են փոխադարձաբար օգուտ ստանալ:

Բարձրագույն կրթության մեջ խոցելի, անապահով եւ թերներկայացված խմբերի բազում մասնակցությունն ավելի մեծ առավելությունների է բերում սոցիալական բարեկեցության ապահովման մակարդակի նվազման, առողջապահական արդյունքների բարելավման եւ համայնքի ներգրավվածության ընդլայնման առումով: Ընդհանուր առմամբ, այս ավելի մեծ առավելություններն ապահովում են համախմբված ժողովրդավարական հասարակությունների կայունությունը, որտեղ գերակայում են սոցիալական արդարությունը, հանրային բարիքը, հանրային պատասխանատվությունը եւ սոցիալական շարժունակությունը: Քաղաքացիների առավել մեծ շրջանակին տրամադրվող ավարտական որակավորումները նշանակում են զբաղվածության ավելի լավ հեռանկարներ, աշխատավարձից բացի ավելի բարձր հավելավճար եւ բարձրագույն կրթության օգուտների գնահատման փոխանցում հաջորդ սերնդին եւ նրանց տեղական համայնքներին: Բացի ԵԲԿՏ-ի կողմից ստանձնած հանձնառություններից՝ բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության բարելավմանն ուղղված համապարփակ եւ պրոակտիվ մոտեցում ցուցաբերելը ծառայում է ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին հասնելու ուղղությամբ առաջընթացի հետագա արագացմանը:

Այս սկզբունքները եւ ուղեցույցները պետական մարմինների եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների համար սահմանում են ԵԲԿՏ-ի հաջորդ տասնամյակի ընթացքը՝ բարձրագույն կրթության առանցքային առաքելություններում, ինչպես նաեւ բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկա եւ ապագա ուսանողների եւ անձնակազմի հզորացման քաղաքականության մեջ ինտեգրելու հետեւյալ սկզբունքները՝ ուսումնառություն եւ դասավանդում, հետազոտություն, նորարարություն, գիտելիքների փոխանակում եւ տարածում, ինստիտուցիոնալ կառավարում եւ ղեկավարում: Հասանելիության պայմանների ընդլայնման շրջանակներից դուրս գալու եւ

[1] Հասանելի է հետեւյալ հղմամբ http://www.ehea.info/media.ehea.info/file/2015_Yerevan/71/5/Widening_Participation_for_Equity_and_Growth_A_Strategy_for_the_Development_of_the_SD_and_LLL_in_the_EHEA_to_2020_613715.pdf

[2] Խոցելի, անապահով եւ թերներկայացված ուսանողների սահմանումների հետ կապված եզրույթների եւ սահմանումների բառարանը գտնվում է սույն փաստաթղթի վերջում:

փոխարենը «ոչ մեկին հետեւում չթողնելու» հասկացության վրա կենտրոնանալու միջոցով սոցիալական ուղղվածությունը բարելավելը խիստ կարեւոր բայլ է դեպի առաջ, երբ փորձում ես ամրապնդել մեր հասարակություններն ու ժողովրդավարությունները: Տարբեր ուսումնական միջավայրերին աջակցելն անհրաժեշտություն է եւ պետք է դիտարկվի որպես հասարակությունների մեջ արված ներդրում, եւ պետական մարմինները պետք է պատասխանատվություն ստանձնեն՝ երաշխավորելու, որ առաջարկվող սկզբունքների եւ ուղեցույցների վերաբերյալ անցկացվեն խորհրդակցություններ, դրանք համապատասխանեցվեն ազգային իրողություններին եւ իրականացվեն՝ մեր բարձրագույն կրթության համակարգերի համար ավելի լավ ապագա ապահովելու համար:

Ստորեւ ներկայացված տեքստում շարադրված սկզբունքները պետք է հասկանալ որպես բարձր մակարդակով արված հայտարարություններ, որոնք հիմք են ծառայում սոցիալական ուղղվածությունների ամրապնդմանն ուղղված տարբեր քաղաքականությունների հայեցակարգման համար: Ուղեցույցները համարվում են առաջարկություններ, որոնք նպատակ ունեն խորհուրդներ տալու քաղաքականություն մշակողներին, թե ինչպես պետք է սկզբունքները գործնականում իրականացվեն: Հետեւաբար այս ամբողջ փաստաթուղթը պետք է դիտարկվի ոչ թե որպես ստուգաթերթ, այլ ավելի շուտ որպես ազգային եւ ինստիտուցիոնալ մակարդակներում քաղաքականությունների շարունակական բարելավման եւ դրանց արդյունավետ իրականացման հիմք:

Սկզբունքները

1. **Համակարգային եւ ինստիտուցիոնալ մակարդակներում, ինչպես նաեւ ԵԲԿՏ եւ ԵՄ մակարդակներում սոցիալական ուղղվածությունը պետք է կենտրոնական տեղ զբաղեցնի բարձրագույն կրթության ռազմավարություններում:** Բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության ամրապնդումը եւ հասարակության բազմազանությունն արտացոլելու համար հավասարության ու ներառականության խթանումը, ընդհանուր առմամբ, բարձրագույն կրթության համակարգի պարտականությունն է եւ պետք է դիտարկվի որպես շարունակական հանձնառություն:

   Ուղեցույցները:

   Բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության նկատմամբ ստանձնած ռազմավարական հանձնառությունը պետք է համապատասխանեցվի հստակ թիրախների հետ, որոնք կարող են կա՛մ ինտեգրվել առկա բարձրագույն կրթության քաղաքականության մեջ, կա՛մ դրան զուգահեռաբար զարգանալ: Այդ թիրախները պետք է ուղղված լինեն բոլոր ներկա եւ ապագա ուսանողների համար ուսումնառության հասանելիության ընդլայնման, դրան մասնակցության եւ այն ավարտելու գործընթացներին աջակցություն տրամադրելուն:

   Ռազմավարությունների ստեղծման գործընթացում պետք է տեղի ունենա ընդլայնված երկխոսություն պետական մարմինների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, ուսանողների եւ անձնակազմի ներկայացուցիչների եւ այլ հիմնական շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ սոցիալական գործընկերների, հասարակական կազմակերպությունների եւ խոցելի, անապահով եւ թերներկայացված խմբերի անձանց միջեւ: Այս ընդլայնված երկխոսությունը պետք է ապահովի ներառական բարձրագույն կրթության ռազմավարությունների ստեղծումը, որոնք խթանում են հավասարությունն ու բազմազանությունը եւ արձագանքում են լայն համայնքի կարիքներին:

2. **Իրավական կարգավորումներով կամ քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերով պետք թույլատրվի եւ հնարավորություն ընձեռվի բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ մշակելու բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հասանելիությունն ընդլայնելու, ուսումնառությանը մասնակցելու եւ այն ավարտելու ուղղությամբ իրենց հանրային պատասխանատվությունն իրականացնելու սեփական ռազմավարությունները:**

   Ուղեցույցները:

   Իրավական կարգավորումներով եւ վարչական կանոններով պետք է թույլատրվի ցուցաբերել բավարար ճկունություն ուսումնական ծրագրերի մշակման, կազմակերպման եւ մատուցման հարցում՝ ուսանողների կարիքների բազմազանությունն արտացոլելու համար: Բարձրագույն ուսումնական հաստատություններին պետք է հնարավորություն ընձեռվի կազմակերպելու առկա եւ հեռակա ուսուցում, ուսուցման ճկուն եղանակներ, խառը եւ հեռավար ուսուցում, ինչպես նաեւ ճանաչելու ուսումնառության նախորդ աստիճանը (ՈՒՆԱՃ)՝ ուսանողների տարբերի խմբերի կարիքները բավարարելու համար:

   Պետական մարմինները պետք է խթանեն բարձրագույն կրթության ոլորտում ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման նախորդ աստիճանի (ՈՒՆԱՃ) ճանաչումը, քանի որ այն դրական ազդեցություն ունի ուսուցման հասանելիության ընդլայնման, անցումային փուլի եւ այն ավարտելու, հավասարության եւ ներառականության, շարժունակության եւ զբաղվածության վրա: ՈՒՆԱՃ-ը հնարավորություն է ընձեռում ցկյանս կրթության ճկուն մեթոդներ ներդրել ամբողջ կրթական, այդ թվում՝ բարձրագույն կրթության ոլորտում: ՈՒՆԱՃ-ի իրականացումը կպահանջի արդյունավետ համագործակցություն բարձրագույն կրթության համակարգի, գործատուների եւ լայն համայնքի միջեւ, եւ դա հնարավոր դարձնելու համար որակավորումների ազգային շրջանակները պետք է դյուրացնեն ուսումնառության արդյունքների թափանցիկ ճանաչումը եւ որակի ապահովման հուսալի ընթացակարգերը:

3. **Ամբողջ կրթական համակարգի ներառականությունը պետք է բարելավվի՝ մշակելով հետեւողական քաղաքականություն՝ սկսած նախադպրոցական կրթությունից մինչեւ բարձրագույն կրթություն, եւ ցկյանս կրթության ամբողջ ընթացքում:**

Ուղեցույցները:

Կարեւոր է սիներգիաներ ստեղծել կրթական բոլոր մակարդակների եւ հարակից քաղաքականության ոլորտների (ինչպիսիք են ֆինանսները, զբաղվածությունը, առողջապահությունը եւ սոցիալական բարեկեցությունը, բնակարանային ապահովումը, միգրացիան եւ այլն) հետ՝ քաղաքականության շրջանակներում իրականացվող միջոցառումներ մշակելու համար, որոնք ստեղծում են հավասարություն, բազմազանություն եւ ներառականություն խթանող եւ լայն համայնքի կարիքներին արձագանքող ներառական միջավայր ամբողջ կրթական ոլորտում:

Սոցիալական ուղղվածության քաղաքականությունը պետք է ոչ միայն աջակցի ներկա ուսանողներին, այլ նաեւ հավանական ուսանողներին՝ վերջիններիս բարձրագույն կրթության համար նախապատրաստելու եւ դեպի այդ համակարգ անցում կատարելու համար: Բարձրագույն կրթությանը մասնակցությունը պետք է լինի ցկյանս կրթության տարբերակով, այդ թվում՝ այն մեծահասակների համար, որոնք որոշում են կայացնում վերադառնալ կամ ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություններ իրենց կյանքի հետագա փուլերում: Ներառական մոտեցումը պետք է ներգրավի լայն համայնքներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ եւ այլ շահագրգիռ կողմեր՝ բարձրագույն կրթության հասանելիության ուղիներ համատեղ ստեղծելու համար:

Հավասարությունը, բազմազանությունը եւ ներառականությունը պետք է առանցքային դեր ունենան նախնական մասնագիտական հաստատություններում դասավանդողների վերապատրաստման գործում:

4. **Վստահելի տվյալներն անհրաժեշտ նախապայման են բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության փաստահեն բարելավման համար:** Բարձրագույն կրթության համակարգերը պետք է սահմանեն կոնկրետ տեսակի տվյալների հավաքագրման նպատակները եւ խնդիրները՝ հաշվի առնելով ազգային իրավական շրջանակների առանձնահատկությունները: Պետք է զարգացնել այդպիսի տվյալներ հավաքագրելու, մշակելու եւ օգտագործելու համապատասխան կարողություններ՝ բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածությանը տեղեկացնելու եւ աջակցելու համար:

Ուղեցույցները:

Արդյունավետ քաղաքականություններ մշակելու համար անհրաժեշտ է ազգային տվյալների շարունակական հավաքագրում: Ներպետական իրավական շրջանակների սահմաններում տվյալների այդպիսի հավաքագրումը պետք է տեղեկություններ տրամադրի ուսանողների բանակակազմի, բարձրագույն կրթության հասանելիության եւ դրան մասնակցության, այն կիսատ թողնելու եւ ավարտելու, այդ թվում՝ ուսումնառությունն ավարտելուց հետո աշխատաշուկա անցում կատարելու մասին եւ թույլ տա բացահայտել խոցելի, անապահով եւ թերներկայացված խմբերը:

Տվյալների այդպիսի հավաքագրումը միջազգային մակարդակով համադրելի դարձնելու նպատակով սոցիալական ուղղվածությանը վերաբերելի վարչական տվյալների հավաքագրման կատեգորիաների վրա աշխատանքները պետք է մշակվեն ԵԲԿՏ մակարդակում «Եվրառուսանող» կամ նմանօրինակ հարցումների օգնությամբ: Գործընթացը լավարկելու եւ պետական կառավարման եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների վրա վարչական բեռից խուսափելու նպատակով այս մշակմամբ պետք է հաշվի առնել առկա ազգային գործելակերպերը եւ տվյալների հավաքագրման համապատասխան գործընթացները:

Ազգային տվյալների հավաքագրման այդ գործընթացները կարող են համապատասխանության եւ անհրաժեշտության դեպքում լրացվել բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից լրացուցիչ հարցումներ, հետազոտություններ եւ վերլուծություններ իրականացվելով՝ ավելի լավ հասկանալու խոցելիության, անապահովության եւ թերներկայացվածության մակարդակը կրթության ոլորտում, ինչպես նաեւ կրթական համակարգում ուսանողների անցում կատարելը:

5. **Պետական մարմինները պետք է մշակեն քաղաքականություններ, որոնք հնարավորություն կընձեռեն բարձրագույն ուսումնական հաստատություններին արդյունավետ խորհրդատվություն եւ ուղղորդում ապահովել հավանական եւ ընդունված ուսանողների համար՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառությանը նրանց հասանելիությունն ընդլայնելու, դրան մասնակցելու եւ այն ավարտելու նպատակով:** Այս ծառայությունները պետք է համածայնեցված լինեն ամբողջ կրթական համակարգում՝ հստակ հաշվի առնելով կրթության տարբեր մակարդակների, ուսումնական հաստատությունների եւ աշխատաշուկայի միջեւ անցումները:

Ուղեցույցները:

Պետական մարմինները պետք է ստեղծեն պայմաններ, որոնք հնարավորություն կընձեռեն համագործակցելու տարբեր պետական հաստատությունների միջեւ, որոնք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ միասին տրամադրում են խորհրդատվական եւ ուղղորդման ծառայություններ՝ սիներգիաներ ստեղծելու եւ նմանօրինակ ծառայությունների կրկնօրինակումը բացառելու համար: Այս ծառայությունները պետք է պահպանեն հստակության եւ օգտվողի համար հարմարավետության սկզբունքները, քանի որ վերջնական օգտվողները պետք է կարողանան հեշտությամբ հասկանալ դրանք:

Բազմազան ուսանողական քանակակազմի շրջանակներում հստակ ուշադրություն պետք է դարձնել ֆիզիկական եւ հոգեբանական առողջության խնդիրներ ունեցող ուսանողներին: Այդ ուսանողները պետք է ունենան մասնագիտական աջակցության հասանելիություն, որ ապահովվի նրանց՝ բարձրագույն ուսումնական հաստատություններ հաջողությամբ ընդունվելու եւ ավարտելու գործընթացները: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ուսումնառության կազմակերպման եւ ուսանողների կենսապայմանների հետեւանքով առաջացած հոգեբանական մարտահրավերների կանխարգելմանը:

Պետական մարմինները նաեւ պետք է դիտարկեն օմբուդսմենի ինստիտուտին համանման ինստիտուտներ ստեղծելու հարցը, որոնք կունենան կարողություններ եւ գիտելիքներ՝ լուծելու ցանկացած հակասություն, մասնավորապես՝ կապված հավասարությանն առնչվող խնդիրների հետ, որոնք կարող են առաջանալ բարձրագույն կրթություն ստանալու կամ մասնակցելու ընթացքում, կամ հակասություններ, որոնք խոչընդոտում են ուսումնառությունն ավարտելու գործընթացը:

6. **Պետական մարմինները պետք է բարձրագույն ուսումնական հաստատությունների համար ապահովեն բավարար եւ կայուն ֆինանսավորում եւ ֆինանսական ինքնավարություն, ինչը վերջիններիս հնարավորություն կընձեռի ստեղծելու համապատասխան կարողություններ՝ բարձրագույն կրթության ոլորտում բազմազանությունն ընդունելու եւ հավասարությանը եւ ներառականությանը նպաստելու համար:**

Ուղեցույցները:

Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգերը պետք է դյուրացնեն բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության հետ կապված ռազմավարական նպատակների իրականացումը: Բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է աջակցություն ստանան եւ պարգեւատրվեն բարձրագույն ուսումնական դասընթացների հասանելիությունն ընդլայնելու, դրանց մասնակցության մակարդակը բարձրացնելու եւ դրանք ավարտելու գործում, մասնավորապես՝ խոցելի, անապահով եւ թերներկայացված խմբերի առնչությամբ համածայնեցված թիրախներին հասնելու համար: Այս թիրախները իրագործելու մեխանիզմները չպետք է բացասական ֆինանսական հետեւանքներ ունենան բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնական ֆինանսավորման վրա:

Ֆինանսական աջակցության համակարգերի նպատակը պետք է լինի բոլոր ուսանողների համար համընդհանուր կիրառելի լինելը, սակայն երբ դա հնարավոր չէ, ուսանողների ֆինանսական աջակցության պետական համակարգերը պետք է առաջին հերթին կարիքների վրա հիմնված լինեն եւ պետք է բարձրագույն կրթությունը հասանելի դարձնեն բոլոր ուսանողների համար, խթանեն դրա հասանելիությունը եւ բարձրագույն ուսման մեջ հաջողություններ ունենալու հնարավորություններ ընձեռեն: Դրանք հիմնականում պետք է նպաստեն ինչպես ուսման ուղղակի ծախսերը (վարձավճարներ եւ ուսումնական նյութեր), այնպես էլ անուղղակի ծախսերը հոգալուն (օրինակ՝ կացարան, որն ավելի ու ավելի խնդրահարույց է դառնում ԵԲԿՏ-ում ուսանողների համար՝ բնակարանային, կենցաղային եւ տրանսպորտային ծախսերի ավելացման պատճառով եւ այլն):

7. **Պետական իշխանությունները պետք է բարձրագույն ուսումնական հաստատություններին օգնեն ամրապնդելու դրանց կարողությունները՝ բազմազան ֆանակակազմ ունեցող ուսանողության եւ անձնակազմի կարիքներին արձագանքելու եւ ներառական ուսումնական միջավայրեր եւ ներառական ինստիտուցիոնալ մշակույթներ ստեղծելու համար:**

Ուղեցույցները:

Պետական մարմինները պետք է աջակցեն եւ համապատասխան միջոցներ տրամադրեն բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ ակադեմիական եւ վարչական անձնակազմի նախնական եւ շարունակական մասնագիտական վերապատրաստման մակարդակը բարելավելու համար, որպեսզի նրանք կարողանան պրոֆեսիոնալ կերպով եւ արդարացիորեն աշխատել բազմազան ֆանակակազմ ունեցող ուսանողության եւ անձնակազմի հետ:

Հնարավորության դեպքում որակի արտաքին ապահովման համակարգերը պետք է դիտարկեն, թե ինչպես են սոցիալական ուղղվածությունը, բազմազանությունը, հասանելիությունը, հավասարությունը եւ ներառականությունն արտացոլված բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ առաքելությունների շրջանակներում՝ միեւնույն ժամանակ հարգելով բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքը:

8. **Բարձրագույն կրթության ոլորտում միջազգային շարժունակության ծրագրերը պետք է ունենան այնպիսի կառուցվածք եւ իրականացվեն այնպես, որ խթանեն բազմազանությունը, հավասարությունը եւ ներառականությունը, եւ մասնավորապես պետք է խթանեն խոցելի, անապահով կամ թերներկայացված խմբերի ուսանողների եւ անձնակազմի մասնակցությունը:**

Ուղեցույցները:

Ուսումնական շարժունակության միջոցով միջազգային փորձը բարելավում է ուսումնառության արդյունքների որակը բարձրագույն կրթության ոլորտում: Պետական մարմինները եւ բարձրագույն ուսումնական հաստատությունները բոլորի համար պետք է ապահովեն ուսուցման եւ վերապատրաստման շարժունակության ազգային եւ միջազգային ծրագրերով առաջարկվող ուսումնառության հնարավորությունների հավասար հասանելիություն եւ ակտիվ կերպով վերացնեն խոցելի, անապահով կամ թերներկայացված ուսանողական խմբերի եւ անձնակազմի շարժունակության խոչընդոտները:

Ի լրումն ֆիզիկական շարժունակության հետագա աջակցության՝ այդ թվում՝ ԵԲԿՏ շրջանակներում տրամադրող դրամաշնորհների եւ վարկերի լիակատար տեղափոխելիությանը, պետական մարմինները եւ բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է դյուրացնեն տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործումը՝ խառը շարժունակությանն աջակցելու եւ միջազգայնացումը տեղում խթանելու համար՝ դասընթացների իրականացման գործընթացում ներդնելով միջազգային առցանց համագործակցություն: Խառը շարժունակությունը ֆիզիկական շարժունակության ժամանակահատվածի եւ առցանց ուսուցման ժամանակահատվածի համադրություն է: Այդպիսի առցանց համագործակցությունը կարող է օգտագործվել ուսումնառության արդյունքներն ընդլայնելու եւ ֆիզիկական շարժունակության ազդեցությունը մեծացնելու համար, օրինակ՝ համախմբելով մասնակիցների առավել բազմազան խմբեր, կամ առաջարկելով շարժունակության տարբերակների ավելի լայն շրջանակ:

9. **Բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է ապահովեն, որ համայնքի ներգրավվածությունը բարձրագույն կրթության ոլորտում նպաստի բազմազանությանը, հավասարությանը եւ ներառականությանը:**

Ուղեցույցները:

Համայնքի ներգրավվածությունը պետք է դիտարկվի որպես գործընթաց, որով բարձրագույն ուսումնական հաստատությունները ներգրավվում են համայնքի արտաքին շահագրգիռ կողմերի հետ՝ համատեղ գործողություններ ձեռնարկելու համար, որոնք կարող են փոխշահավետ լինել: Ինչպես սոցիալական ուղղվածության բաղադրությունը, համայնքի ներգրավվածությունը պետք է ներառված լինի բարձրագույն կրթության հիմնական առաքելությունների մեջ: Այն պետք է առնչվի դասավանդման եւ ուսումնառության, հետազոտության, ծառայությունների եւ գիտելիքների փոխանակման, ուսանողների եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների անձնակազմի եւ ղեկավարությանը վերաբերող հարցերին: Այդպիսի ներգրավվածությունն ապահովում է ամբողջական հենք, որի հիման վրա համալսարանները կարող են լուծել հասարակության կարիքների լայն շրջանակ, այդ թվում՝ խոցելի, անապահով եւ թերներկայացված խմբերի կարիքները՝ միաժամանակ հարստացնելով դրանց դասավանդման, հետազոտական եւ այլ հիմնական գործառույթները:

Համայնքի շահագրգիռ կողմերը (օրինակ՝ տեղական իշխանությունները, մշակութային կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները, բիզնեսները, բաղաքացիները) պետք է կարողանան բովանդակալից կերպով համագործակցել բարձրագույն կրթության դերակատարների հետ բաց երկխոսության միջոցով: Սա հնարավորություն կընձեռի ստեղծելու բուհ-համայնք իրական գործընկերություն, որը կարող է արդյունավետորեն վերացնել սոցիալական եւ ժողովրդավարական մարտահրավերները:

10. **Պետական իշխանությունները պետք է բաղաքական երկխոսություն իրականացնեն բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ այլ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ այն մասին, թե ինչպես կարող են վերը նշված սկզբունքները ու ուղեցույցները փոխանցվել եւ կիրարկվել ինչպես ազգային համակարգում, այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակում:**

Ուղեցույցները:

Բաղաքականության այդպիսի երկխոսությունը պետք է թույլ տա մշակել նպատակներին համապատասխան բաղադրական միջոցներ, որոնք պետք է հարգեն ինստիտուցիոնալ ինքնավարությունը, խուսափեն ցանկացած ավելորդ վարչական բեռից եւ այդպիսով հնարավոր դարձնեն կոնկրետ առաջընթացը բարձրագույն կրթության բազմազանության, հավասարության եւ ներառականության առնչությամբ:

Վերոնշյալ սկզբունքների եւ ուղեցույցների շրջանակում գործընկերների փոխադարձ աջակցությունը եւ լավագույն գործելակերպերի փոխանակումը խիստ կարեւոր նշանակություն ունեն ԵԲԿՏ երկրների միջեւ՝ բարձրագույն կրթության համակարգերի ներառականության ուղղությամբ առաջընթացը դյուրացնելու համար:

Եզրույթների եւ սահմանումների բառարան[3]

Այս բառարանում սահմանվում են սույն փաստաթղթի երեք առանցքային եզրույթները, մասնավորապես՝ թերեռեկայացված, անապահով եւ խոցելի ուսանողները: Սահմանումները չպետք է ընկալվեն որպես իրավական սահմանումներ եւ հետեւաբար չեն հակասում որեւէ գործող իրավական կարգավորման, այլ դրանք նախատեսված են որպես բացատրական սահմանումներ, որոնք օգտագործվում են սկզբունքների եւ ուղեցույցների բովանդակության հետ կապված:

Թերեռեկայացված ուսանողներ

Սովորողների խումբը թերեռեկայացված է որոշակի հատկանիշների (օրինակ՝ սեռ, տարիք, ազգություն, աշխարհագրական ծագում, սոցիալ-տնտեսական վիճակ, էթնիկ փոքրամասնություններ) մասով, եթե ուսանողների շրջանում դրա մասնաբաժինն ավելի ցածր է, քան համադրելի խմբի մասնաբաժինն ընդհանուր բնակչության մեջ: Սա կարող է փաստաթղթավորվել ընդունելության ժամանակ, ուսումնառության ընթացքում կամ ավարտելիս: Անհատները սովորաբար ունենում են մի քանի թերեռեկայացված հատկանիշներ, այդ իսկ պատճառով թերեռեկայացված հատկանիշների համակցությունները (միջհատելիությունը) միշտ պետք է հաշվի առնել: Ավելին, թերեռեկայացվածությունը կարող է ազդել նաեւ բարձրագույն կրթության տարբեր մակարդակների վրա՝ ուսումնական ծրագիր, ֆակուլտետ կամ բաժին, բարձրագույն ուսումնական հաստատություն, բարձրագույն կրթական համակարգ:
Այս սահմանումը լրացնում է Լոնդոնի հաղորդումն առ այն, «որ բոլոր մակարդակներում բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվող, ուսումնառությանը մասնակցող եւ ավարտող ուսանողների քանակակազմը պետք է արտացոլի մեր բնակչության բազմազանությունը», սակայն այն ամբողջությամբ չի ընդգրկում այն:

Անապահով ուսանողներ

Անապահով ուսանողները հաճախ հանդիպում են կոնկրետ մարտահրավերների՝ ի տարբերություն բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող իրենց հասակակիցների: Սա կարող է արտահայտված լինել տարբեր ձեւերով (օրինակ՝ հաշմանդամությունը, ընտանիքի ցածր եկամուտը, ընտանիքի փոքր աջակցությունը կամ դրա բացակայությունը, ծնողազուրկ լինելը, դպրոցից դպրոց բազմաթիվ տեղափոխությունները, հոգեկան առողջությունը, հղիությունը, սովորելու համար ավելի քիչ ժամանակ ունենալը, քանի որ անձը պետք է աշխատելով վաստակի իր ապրուստի միջոցը կամ ունի խնամելու պարտականություններ): Անապահովությունը կարող է լինել մշտական, կարող է առաջանալ ժամանակ առ ժամանակ կամ միայն սահմանափակ ժամանակահատվածով:
Անապահով ուսանողները կարող են լինել թերեռեկայացված խմբի մաս, սակայն դա պարտադիր չէ: Հետեւաբար «անապահով» եւ «թերեռեկայացված» եզրույթները հոմանիշներ չեն:

Խոցելի ուսանողներ

Խոցելի ուսանողները կարող են հայտնվել անապահով կատեգորիայի վտանգի տակ (տե՛ս վերեւում) եւ բացի այդ, ունենան հատուկ (պաշտպանության) կարիքներ: Օրինակ, քանի որ նրանք տառապում են հիվանդությամբ (այդ թվում՝ հոգեկան առողջությունը) կամ ունեն հաշմանդամություն, քանի որ նրանք անչափահաս են, քանի որ նրանց կացության թույլտվությունը կախված է իրենց ուսման հաջողությունից (եւ հետեւաբար նաեւ առանձին դասավանդողների կայացրած որոշումներից), քանի որ նրանք խտրականության ենթարկվելու վտանգի տակ են: Այս սովորողները խոցելի են այն առումով, որ նրանք հնարավոր է չկարողանան ապահովել իրենց անձնական բարեկեցությունը, կամ որ նրանք չեն կարող պաշտպանվել իրենց վնասից կամ շահագործումից եւ ունեն լրացուցիչ աջակցության կամ ուշադրության կարիք:

[3] Այս բառարանը նախատեսված է միայն սույն սկզբունքների եւ ուղեցույցների նպատակների համար

Co-funded by
the European Union

This translation is co-funded by the European Union. Views and opinions expressed are however those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union or the European Education and Culture Executive Agency (EACEA). Neither the European Union nor EACEA can be held responsible for them.

EUROPEAN
Higher Education Area

bologna
process

ITALIAN BFUG SECRETARIAT
2018-2020